ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆԻ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԱԲՅԱՆԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձինք

   Արայիկ Խզմալյան

   Աստղիկ Մարաբյան

2. Զբաղեցրած պաշտոնը

   ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ

   ՀՀ ԿԳՄՄՆ մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

   Իտալիայի Հանրապետություն, Վենետիկ, ապրիլի 21-23, 2022

4. Հրավիրող կողմը

   Վենետիկի Բիենալե հիմնադրամ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

   - *Վենետիկի ժամանակակից արվեստի 59-րդ միջազգային բիենալեի շրջանակում Հայաստանի ազգային տաղավարի համակարգում և պաշտոնական բացման մասնակցության ապահովում.*

6. Քննարկված թեմաները.

   - *Ժամանակակից արվեստի ոլորտում միջազգային կապերի խթանում, համագործակցության նոր հեռանկարների բացահայտում,*

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ապրիլի 21, 2022

2022 թ. ապրիլի 21-ին Վենետիկի 59-րդ ժամանակակից արվեստի միջազգային բիենալեիի շրջանակում տեղի ունեցավ Հայաստանի ազգային տաղավարի պաշտոնական բացումը, որին ներկա էին Վենետիկի քաղաքապետարանի սոցիալական ապահովության, զբոսաշրջության և տնտեսական զարգացման գծով քաղաքապետի

տեղակալ Սիմոնե Վենտուրինին, Վենետիկի մշակութային ժառանգության և գործունեության նախարարության տեսուչ Էմանուելա Կարպանին, Վենետիկում ՀՀ պատվավոր հյուպատոս Գագիկ Սարուխանյանը, Հռոմում ՀՀ դեսպանության խորհրդական Քրիստինա Մեհրաբեկյանը, Մխիթարյան Միաբանությունից Հայր Համազասպ վրդ. Քէշիշեանը, ինչպես նաև հայ համայնքի և արվեստասեր հասարակության ներկայացուցիչներ: Բիենալեի բացմանը Հայաստանից մասնակցում էին հայաստանյան տաղավարի հանձնակատար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանը և տաղավարի համակարգող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը:

2022 թվականին Վենետիկի միջազգային բիենալեին Հայաստանը ներկայացավ հայ-լիտվացի արվեստագետ և կոմպոզիտոր Անդրիուս Հարությունյանի «Ղարիբ» նախագծով, որը հաղթող էր ճանաչվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից 2021 թ. կազմակերպված մրցույթի արդյունքում: (համադրողներ՝ Անի Դավիդյան և Ելենա Սորոկինա): Հայաստանի տաղավարի կազմակերպչական և համակարգման աշխատանքներն իրականացվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Նախագիծը մեծ հետաքրքրություն առաջացրեց և բարձր գնահատականի արժանացավ մասնագիտական և լայն հանրության կողմից:

Ցուցահանդեսը կտևի մինչև 2022 թ. նոյեմբերի 27-ը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

   - *Քննարկվեց կազմակերպել «Ղարիբ» նախագծի ներկայացումը Հայաստանում:*

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

   - *Առաջարկվում է 2022 թ. աշնանը Հայաստանում կազմակերպել հանդիպում ստեղծագործական թիմի հետ և հայ հանրությանը ներկայացնել «Ղարիբ» նախագիծը:*

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Ապրիլի 25, 2022

Recoverable Signature

X

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

Signed by: KHZMALYAN ARAYIK 3101800129 *Արայիկ Խզմալյան*

Աստղիկ Մարաբյան